ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

336.3
Խ-11

# ՀՐԱՀԱՆԳ № 569

## ԾՐՋԱՆԱՅԻՆ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ— ԱՌԱՋՆԵՐՈՒՄ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

5 ՈԳՈՍՏՈՍԻ 1936 Թ.

336.3
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԽՍՀ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ և ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

11.09.2013
18679
27936

Տեխն. ձեվավոր. յեվ սրբագրեց Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

БІБЛІОТЕКА
Академії Наук
УСРР

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ. ՍՍՀ
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
60045

Սևան-Ջանգվլինի տպարան. Ռեկլամ-Հրատ. Բյուրո

Գլավլիտ № 2192 Պատվեր № 25 Տիրաժ 800

17 FEB 2010

1) Ֆինանսական մարմինները և խնայողական դրամարկղները պարտավորվում են առաջներում բաց թողնված պետական ներքին շահող փոխառությունների պարտատոմսերը փոխանակել յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով խիստ պահպանելով՝

ա) ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1936 թվի հուլիսի 1-ի վորոշումը՝ «Յերկրորդ հնգամյակի պետական ներքին փոխառության (չորրորդ տարվա բաժին) և առաջներում բաց թողնված փոխառությունների կոնվերսիայի մասին».

բ) 1936 թվի հուլիսի 1-ին ԽՍՀՄ ԺԿԽ-ի կողմից հաստատված և ԽՍՀՄ ՖԺԿ-ի կողմից հրապարակված հրահանգը՝ «Յերկրորդ հնգամյակի պետական ներքին փոխառության (չորրորդ տարվա բաժին) բաց թողման կարգի և պայմանների և առաջներում բաց թողնված պետական ներքին փոխառությունների կոնվերսիայի մասին».

գ) ԽՍՀՄ ՖԺԿ-ի հրահանգը՝ Յերկրորդ հնգամյակի պետական ներքին փոխառության (չորրորդ տարվա բաժին) իրացման կարգի ու պայմանների և մինչև 1936 թիվը բաց թողնված պետական փոխառությունների փոխանակման (կոնվերսիայի) մասին։

2) Պարտատոմսերի փոխանակումն սկսելու ժամկետը յուրաքանչյուր հանրապետության մարզի և յերկրի մեջ, սահմանվում է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից 1936 թվի սեպտեմբերի 1-ից մինչև 1937 թվի մարտի 1-ը ժամկետի սահմաններում։

Դաշնակից և ինքնավար հանրապետությունների ֆինժողկոմատները, յերկրային և մարզային ֆինբաժինները և պետաշխնայդրամարկղների և պետական վարկի վարչությունները պարտավոր են ներկայացնել ի հաստատություն հանրապետական ժողկոմխորհին և յերկրային (մարզային) գործկոմներին յուրաքանչյուր քաղաքում և շրջանում փոխանակումն անցկացնելու մասին օրացուցային պլան, յելնելով ԽՍՀՄ ՖԺԿ-ի կողմից սահմանված ժամկետներից,

3) Պարտատոմսերի փոխանակումն անցկացնելու վերաբե-

րյալ աշխատանքների կազմակերպումն ու նախապատրաստումը շրջանում (քաղաքում) և այդ ամբողջ աշխատանքների անմիջական պատասխանատվությունը դրվում է շրջ. (քաղ.) ֆինբաժինների և շրջ. (քաղ.) խնայդրամարկղների վարիչների վրա:

4) Ձեռնարկություններում, հիմնարկներում, գյուղխորհուրդներում և կոլտնտեսություններում պարտատոմսերի փոխանակումն անց կացնելու հետ միասին, շրջ. (քաղ.) խնայդրամարկղները պարտավոր են պարտատոմսերի փոխանակումը կատարել նաև գործառնական բաժիններում և առաջին կարգի բաժանմունքներում:

## ՇՐՋ(ՔԱՂ) ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5) Շրջ(քաղ) ֆինբաժինների և շրջ(քաղ) խնայդրամարկղների վարիչները պարտավոր են՝

ա) Մշակել յուրաքանչյուր քաղաքում և շրջանում պարտատոմսերի փոխանակումն անցկացնելու վերաբերյալ օրացուցային պլան և ներկայացնել այդպիսին Շրջգործկոմ կամ Քաղխորհուրդ հաստատելու համար, նշելով յուրաքանչյուր ձեռնարկությունում, հիմնարկում, գյուղխորհրդում և կոլտնտեսությունում փոխանակումն անցկացնելու սկզբնական ժամկետը՝ քաղաքի և շրջանի համար սահմանված ժամկետի սահմաններում:

բ) Կազմել կազմակերպչական-մասսայական ձեռնարկումների պլան՝ լայն հաղորդելով քաղաքային և գյուղական ազգաբնակչությանը պարտատոմսերի փոխանակման կարգի ու ժամկետի և փոխանակվող պարտատոմսերը վիճակահանության աղյուսակներով ստուգելու անհրաժեշտության մասին:

գ) Փոխանակումն սկսելուց 15 օրից վոչ ուշ, կցել իրենց աշխատակիցներին (ֆինբաժնի և շրջխնայդրամարկղի) շրջանի (քաղաքի) յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկությանը, դնելով նրանց վրա հիմնարկ-ձեռնարկություններում պարտատոմսերի փոխանակումն ու փոխանակվող պարտատոմսերը վիճակահանությունների աղյուսակներով ստուգումը ճիշտ կազմակերպելու, ինչպես և փոխանակման պայմանները ճշտորեն կիրառելու վրա պարբերաբար հսկելու պարտականությունը:

դ) Հրամանով նշանակել ֆինբաժնի և շրջխնայդրամարկղի աշխատակիցների կողմից շրջխնայդրամարկղի լիազորների, կոլ-



տնտեսականների և մենատնտեսների պարտատոմսերի փոխանակումն անմիջականորեն գյուղխորհուրդներում և կոլտնտեսություններում անցկացնելու համար:

ե) Պատրաստել շրջ(քաղ) խնայդրամարկղի գործառնական բաժինը և առաջին կարգի բաժանմունքները պարտատոմսերի անխափան փոխանակում կատարելու համար: Այդ նպատակով՝

— նախօրոք առանձնացնել համապատասխան քանակով վերահսկիչներ և գանձապահներ.

— առանձնացնել պարտատոմսերի փոխանակումն անցկացնելու հատուկ լուսամուտներ, ստեղծելով մեծագույն հարմարություններ պետական փոխառությունների պարտատոմսատերերի համար, չհարվածելով միաժամանակ ավանդների գործառքներին.

— կազմակերպել տեղեկատու սեղաններ, առանձնացնել և ներգրավել համապատասխան քանակությամբ աշխատակիցներ վիճակահանությունների աղյուսակներով պարտատոմսերն ստուգելու համար և մատակարարել այդ աշխատակիցներին վիճակահանությունների աղյուսակներով:

զ) Ժամանակին վերանորոգել խնայդրամարկղի նկուղը (պահարանը) և ամբողջովին հարմարեցնել այդպիսին անխափան կերպով ընդունելու և պահելու նոր փոխառության, ինչպես և նախորդ, փոխանակման ենթակա փոխառությունների պարտատոմսերը:

է) Պատրաստել փոխանակմանը նախորդ փոխառությունների պարտատոմսերի կլիենտական պորտֆելը, մասնավորապես համեմատել անձնական հաշիվների քարտոտեկները ի պահ և գրավ վերցված պարտատոմսերի հետ, ստուգել, թե ծրարները, վորոնց մեջ գտնվում են պարտատոմսերը, դասավորված են արդյոք ըստ անձնական հաշիվների համարների և կազմել № 219 հաշվում պահված պարտատոմսեր—բաժանորդների այբուբենական ցուցակը:

ը) Տալ հրահանգչական ցուցմունքներ փոխանակման մեջ ներգրավված ֆինբաժնի և խնայողական դրամարկղի աշխատակիցներին և մինչև փոխանակումն սկսելուց 10 օրից վոչ ուշ, վերջացնել այդ աշխատակիցների պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ պատրաստականության ստուգումն, այն մասին, թե ինչ գիտեն նրանք փոխանակման կարգի, պայմանների և տեխնիկայի փոխանակման հաշվառման և հաշվետվության, ինչպես

և փոխանակվող պարտատոմսերը վիճակահանության աղյուսակներով ստուգելու կարգի մասին։

թ) Տալ մանրամասն հրահանգչական ցուցմունքներ հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահներին և դանձապահներին, գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների քարտուղարներին, հաշվետարներին, ինչպես և սարքին ոժանդակող հանձնաժողովներին և, մինչև անգամ փոխանակումն սկսելուց 15 օրից ոչ ուշ վերջացնել այդ աշխատակիցների՝ պարտատոմսերի փոխանակման կարգի և պայմանների վերաբերյալ նրանց պատրաստականության ստուգումը։

ժ) Կազմակերպել հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես և կոլտնտեսություններում ու գյուղխորհուրդներում նախորդ փոխառությունների պարտատոմսերի ստուգումը շահումների և մարման վիճակահանությունների աղյուսակներով, որի համար ներգրավել հիմնարկ-ձեռնարկությունների ոժանդակող հանձնաժողովներին, նրանց ակտիվին և հաշվապահության աշխատակիցներին, իսկ գյուղերում—ոժանդակող հանձնաժողովների կողմից առանձնացված ֆինակտիվիստներին, ինչպես և գյուղխորհուրդների ու կոլտնտեսությունների հաշվետարներին։

6) Շրջ(քաղ) խնայդրամարկղների վարիչները պարտավոր են.

—Ժամանակին մատակարարել հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահությանը և գյուղերի փոխանակման մեջ ներգրավված լիազորներին նոր փոխառության պարտատոմսերով բոլոր կուպյուրներից և նախորդ փոխառությունների վիճակահանությունների աղյուսակների լրիվ կոմպլեկտներով։

— Հսկել, թե ճիշտ և ժամանակին են հանձնում խնայդրամարկղ հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահները և գյուղերի լիազորները նախորդ փոխառությունների փոխանակված պարտատոմսերը և փոխանակման ժամանակ նոր փոխառության չօգտագործված պարտատոմսերը։

— Տանել հաշվառում ճիշտ սահմանված ձևով և պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել ժամանակին։

7) Շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչի և գլխավոր հաշվապահի վրա դրվում է անձնական պատասխանատվություն տանելու, պարտատոմսերի փոխանակման ճիշտ և ժամանակին հաշվառումը և ժամանակին ներկայացնելու պարտատոմսերի փոխանակման ճիշտ հաշվետվությունը։



# ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախորդ փոխառությունների պարտատոմսերը, որոնք ներկայացվում են փոխանակման համար խնայդրամարկղները, կամ անմիջականորեն հիմնարկ-ձեռնարկությունները, գյուղխորհուրդները և կոլտնտեսությունները, անպայման մինչև փոխանակումը պիտի ստուգվեն շահումների և մարման վիճակահանությունների աղյուսակներով, այս հրահանգում սահմանված կարգով։

Խնայդրամարկղները և հիմնարկ-ձեռնարկությունների դանձապահներն ու հաշվապահները, որոնց վրա դրված է պարտատոմսերի փոխանակման պարտականությունը, ինչպես և խնայդրամարկղի գյուղական լիազորները պարտավոր են ընդունել փոխանակման համար նախորդ փոխառությունների միայն այն պարտատոմսերը որոնք՝

ա) Ունեն ֆինանսների ժողկոմի չփչացված ստորագրություն,

բ) Չունեն իրենց վրա կեղծման և ուղղումների հետքեր, ինչպես և մարման դրոշմների (շտամպ) կամ առաջներում կատարված վճարումների այլ հետքեր,

գ) Ունեն իրենց վրա փոխառության անվանումը և պարտատոմսի արժեքը (անվանական արժեքը), ինչպես և պարտատոմսի չփչացված և համարը և սերիան։

դ) Չեն կազմված տարբեր պարտատոմսերի մասերից.

10) Նախորդ փոխառությունների մնացված պարտատոմսերը, որոնց վրա բացակայում են 9-րդ կետում նշված վճարունակության նշանները, պարտատոմսատիրոջ կողմից ներկայացվում են շրջ(քաղ) խնայդրամարկղ, ուր այդ պարտատոմսերը կարող են փոխանակվել միայն շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչի թույլտվությամբ։

Ցեթե փոխանակման համար շրջ(քաղ) խնայդրամարկղ ներկայացված նախորդ փոխառությունների պարտատոմսերը կասկած են հարուցում իրենց իսկական և վճարունակ լինելու մեջ, ապա շրջ(քաղ) խնայդրամարկղն ուղարկում է այդ պարտատոմսերն էքսպերտիզայի սահմանված կարգով։

11) Նախորդ փոխառությունների տոկոսաբեր և տոկոսաբեր-շահող մասերի պարտատոմսերի 1936 թվի նոյեմբերի 1-ի և դեկտեմբերի 1-ի կուպոնները պիտի վճարվեն խնայդրամարկղների կողմից 1936 թվի նոյեմբերի 1-ից, իսկ այն քաղաքնե-

րում, ուր պարտատոմսերի փոխանակումը կկատարվի մինչև 1936 թվի նոյեմբերի 1-ը, փոխանակման հետ միաժամանակ։

12) Խնայդրամարկղները և հիմնարկ-ձեռնարկությունների գանձապահներն ու հաշվապահները, վորոնց վրա դրված է փոխանակման պարտականությունը, ինչպես և խնայդրամարկղի գյուղական լիազորները պարտավոր են առանց վորևե արգելքի ընդունել փոխանակման համար՝

ա) Նախորդ փոխառությունների տոկոսաբեր և տոկոսաբեր-շահող մասերի պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են 1937 թվի նոյեմբերի 1-ի և բոլոր հաջորդ ժամկետների կուպոնները։

բ) «Հնգամյակը 4 տարում» փոխառության պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են լրացուցիչ կտրոնները։

գ) Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա փոխառության անպայման շահող մասի բոլոր պարտատոմսերը, վորոնց վրա բացակայում են «շահումն ստանալու կտրոն»-ը։

13) Յեթե հնգամյակի չորրորդ ավարտական տարվա փոխառության պարտատոմսատերը, վորն ունի շահած պարտատոմս առանց «կտրոն»-ի, հայտարարի, վոր ինքը շահումը չի ստացել և պարտատոմսն առանց «կտրոն»-ի տված է նրան բաժնեգրության վայրում, ապա այդպիսի պարտատոմսի փոխանակումը պիտի կատարվի միայն շրջ(քաղ) խնայդրամարկղում։ Շրջ(քաղ) խնայդրամարկղն այդ դեպքում պիտի վերցնի այդ պարտատոմսատիրոջից հայտարարություն այն տեղի և պայմանների մասին, ուր տրվել է նրան առանց «կտրոն»-ի պարտատոմսը և ըստ այդ հայտարարության կատարի ստուգում պետաշխխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչության 1934 թվի փետրվարի 13-ի № 18-գ հրահանգով սահմանված կարգով։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ՀԻՄՆԱՐԿ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա) Մինչև փոխանակումը քաղաքային (շրջանային) ֆինբաժինները և խնայդրամարկղներն իրենց՝ հիմնարկ-ձեռնարկություններին կցված աշխատակիցների միջոցով պարտավոր են՝— ստանալ յուրաքանչյուր ձեռնարկությունից (հիմնարկից) ոժանդակող հանձնաժողովի և հաշվապահության միջոցով կազմված



բոլոր բանվոր-ծառայողների պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ ձեռնարկումների պլան և հաստատել այդպիսին։

— Ստանալ յուրաքանչյուր ձեռնարկությունից (հիմնարկից) հիմնարկի կամ ձեռնարկության ղեկավարի հրամանի պատճեն հաշվապահության աշխատակիցների և գանձապահների նշանակելու մասին, վորոնք պիտի պատասխանատու դառնան տվյալ հիմնարկ-ձեռնարկության մեջ պարտատոմսերի փոխանակումն անցկացնելու համար։

— Հրահանգել այդ աշխատակիցներին փոխանակման կարգի և պայմանների մասին և ստուգել նրանց գիտելիքներն այն ցուցանիշներով, ըստ վորոնց պարտատոմսերը կարող են ընդունվել փոխանակման համար և այն ցուցանիշներով, ըստ վորոնց պարտատոմսերը չպետք է ընդունել փոխանակման համար։

— Հրահանգել ոժանդակող հանձնաժողովի կողմից առանձնացված ակտիվին պարտատոմսերը մինչև փոխանակումն— աղյուսակներով ստուգելու համար։

— Յելնելով պարտատոմսերի հարմարություններից, սահմանել պարտատոմսերի փոխանակման համապատասխան քանակությամբ կետեր յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկությունում և յուրաքանչյուր կետի աշխատանքի տեղն ու ժամը։

15) Հիմնարկ-ձեռնարկություններում պարտատոմսերի փոխանակման ժամանակ, հիմնարկ-ձեռնարկության ղեկավարի կողմից հրամանով նշանակված գանձապահներն ու հաշվապահության աշխատակիցները պարտավոր են տալ նոր փոխառության այնպիսի արժեքի պարտատոմսեր, վորոնք հայտնված են յեղել պարտատոմսատերերի կողմից փոխանակման ցուցակները (№ 155 ձևով) կազմելու ժամանակ։

Գանձապահները և հաշվապահության աշխատակիցները պարտավոր են նախորդ փոխառությունների պարտատոմսերը փոխանակելու ժամանակ, վերցնել նոր փոխառության յուրաքանչյուր պարտատոմս ստացողի ստորագրությունը № 155 ձևի վրա։

Այն դեպքում, յերբ նախորդ փոխառությունների պարտատոմսատերը փոխանակման համար ներկայացնում է շատ կամ քիչ գումարով պարտատոմսեր, քան հայտարարված է յեղել ձև № 155 փոխանակման ցուցակները կազմելիս, պարտատոմսերի փոխանակումը պիտի կատարել անարգել կերպով։

Նույնպես անարգել կերպով պիտի կատարել նաև այն բանվոր-ծառայողների պարտատոմսերի փոխանակումը, վորոնք ժա-

ժամանակին չեն մտել փոխանակման ցուցակների (ձև № 155) մեջ։

16) Փոխանակման համար պարտատոմսերի հանձնումը հիմնարկ-ձեռնարկություններին և պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ բոլոր հաշվարկումներն այդ հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահության հետ, պետք է կատարեն այն շրջ(քաղ) խնայդրամարկղները կամ առաջին կարգի բաժանմունքները, որոնց հետ հիմնարկ-ձեռնարկությունը կատարում է նոր փոխառության բաժնեգրության հաշվարկումները։

Խնայողական դրամարկղը — № 156 ձևով իրեն ներկայացված տեղեկության հիման վրա, պետք է տա հիմնարկ-ձեռնարկության հաշվապահությանն առ հաշիվ նոր փոխառության պարտատոմսեր համապատասխան գումարով և կուպյուրներով, համաձայն պարտատոմսերի փոխանակման ցուցակների։

Խնայողական դրամարկղը պարտավոր է հետևել, որպեսզի յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության հաշվապահությունը ժամանակին հաշվետու լինի խնայդրամարկղի առաջ նոր փոխառության պարտատոմսերը ծախսելու գործում, տալով այդ փոխառության պարտատոմսերի գումարի չափով նախորդ փոխառության փոխանակված պարտատոմսեր։

17) Հիմնարկ-ձեռնարկության հաշվապահությունը տալիս է փոխանակումն անցկացնելու համար առանձնացված յուրաքանչյուր աշխատակցին անհրաժեշտ գումարով և կուպյուրներով նոր փոխառության առհաշիվ պարտատոմսեր, համաձայն այն անձնավորությունների փոխանակման ցուցակների (ձև № 155) որոնց փոխանակումը հանձնարարված է այդ աշխատակցին։

Այդ աշխատակիցներին տված պարտատոմսերը, յուրաքանչյուր օր աշխատանքները վերջանալուց հետո նրանց կողմից անպայման պետք է հանձնվեն հիմնարկ-ձեռնարկության դրամարկղը, փոխանակման համար նախորդ փոխառություններից ընդունված պարտատոմսերի հետ միասին։

18) Բ. Գ. Կ. բանակի մասերի և հիմնարկների զինվորական ծառայողների պարտատոմսերի փոխանակումը շրջ(քաղ) խնայդրամարկղները պարտավոր են կատարել նույն կարգով, ինչ որ բանվոր-ծառայողների մեջ, այսինքն ԲԳԿ բանակի մասերի և հիմնարկների ֆինանսական ապարատի միջոցով։

Շրջ(քաղ) խնայդրամարկղները պարտավոր են տալ ԲԳԿ բանակի մասերին և հիմնարկներին նոր փոխառության առհաշիվ պարտատոմսեր նույն հիմունքներով, ինչ որ հիմնարկ-ձեռնարկություններին՝

19) Պարտատոմսերի փոխանակումը քաղաքային արհեստագործական-տնայնագործական կոոպերացիայի արտելներում և ուսումնական հիմնարկներում կատարվում է խնայողական դրամարկղների կողմից նույն հիմունքներով, ինչ որ բան-ծառայողների մեջ, այսինքն այդ արտելների և ուսումնական հիմնարկների հաշվապահության կամ հաշվային աշխատակիցների միջոցով։

20) Պարտատոմսերի փոխանակումը մանր հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողների մեջ, ուր հաշվապահություն կամ հաշվային աշխատակիցներ չկան, ինչպես և քաղաքի այլ ազգաբնակչության մեջ, որոնք զբաղված չեն աշխատանքներով հիմնարկ-ձեռնարկություններում, կատարվում է անմիջականորեն (շրջ)քաղ խնայդրամարկղներում և առաջին կարգի բաժանմունքում։

Շրջ(քաղ) խնայդրամարկղները մանր հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողների և քաղաքային այլ ազգաբնակչության պարտատոմսերի փոխանակումը կարող են կատարել տեղերը (հիմնարկ-ձեռնարկությունները, բնակվարձկոոպները) գնալու կարգով, շրջ(քաղ) խնայդրամարկղի աշխատակիցների միջոցով։

Այդպիսի հիմնարկ-ձեռնարկությունների և բնակվարձկոոպների ցուցակները հաստատվում են շրջ(քաղ) ֆինբաժինների և շրջ(քաղ) խնայդրամարկղների վարիչների կողմից։

21) Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության հաշվապահությունը պարտավոր է պարտատոմսերի փոխանակումը վերջանալուց ոչ ուշ քան հինգ օր հետո ներկայացնել շրջ(քաղ) խնայդրամարկղ պարտատոմսերի փոխանակման վերջնական հաշվետվություն սահմանված ձևով (տես № 1 հավելվածը)։

Շրջ(քաղ) խնայդրամարկղների գլխավոր հաշվապահները պարտավոր են ժամանակին պահանջել հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահությունից պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ հաշվետվությունը և ստուգել յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության հետ պարտատոմսերի փոխանակման հաշվարկումների ճշտությունը։

# ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*22) Խնայդրամարկղների պարտատոմսերի փոխանակման գյուղական լիազորները կցվում են խնայդրամարկղի կողմից փոխանակումն անցկացնելու համար մեկ կամ մի քանի գյուղխորհուրդների:*

*Խնայդրամարկղը՝ լիազորի—գյուղխորհուրդ մեկնելու օրվա մասին, վոչ ուշ քան մեկնելուց հինգ օր առաջ պարտավոր է նախազգուշացնել գյուղխորհրդի նախագահին, գյուղօժանդակող հանձնաժողովի նախագահին և կոլտնտեսության նախագահին և ապահովել նրանց միջոցով ազգաբնակչության լայն հաղորդումը առաջիկա փոխանակման մասին:*

*23) Պետական փոխառությունների պարտատոմսատերերի համար մեծագույն հարմարություններ ապահովելու նպատակով, շրջխնայդրամարկղի լիազորները պարտատոմսերի փոխանակումը պիտի կատարեն հերթով յուրաքանչյուր կոլտնտեսությունում, նախօրոք սահմանված օրերին և ժամերին:*

*Լիազորը պարտավոր է գյուղխորհրդի հետ միասին սահմանել փոխանակման օրն ու ժամը յուրաքանչյուր առանձին կոլտնտեսությունում, այդ մասին նախօրոք տեղեկացնելով կոլտնտեսության անդամներին:*

*24) Լիազորին խստիվ արգելվում է պարտատոմսերի փոխանակումը հանձնարարել ուրիշ անձնավորությունների:*

*Լիազորներն իրավունք ունեն հանձնարարել օժանդակելու համար առանձնացված կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների ակտիվիստներին և հաշվետարներին՝ միայն փոխանակման համար ներկայացված պարտատոմսերի ստուգումը վիճակահանության աղյուսակներով:*

*25) Շրջխնայդրամարկղի լիազորը ձեռնամուխ լինելով փոխանակմանը, պիտի ունենա իր ձեռքում փոխանակման համար կազմած ցուցակը (ձև № 155) լիազորը պարտավոր է պարտատոմսերի փոխանակումը կատարել գյուղխորհուրդի և կոլտնտեսության օժանդակող հանձնաժողովների կողմից առանձնացված ներկայացուցիչների ներկայությամբ:*

*Փոխանակման ժամանակ լիազորը պարտավոր է տալ պարտատոմսատիրոջը նոր փոխառության այնպիսի արժողությամբ*



*պարտատոմսեր, վորոնք հայտնված են յեղել փոխանակման ցուցակները (ձև № 155) կազմելու ժամանակ: Լիազորը պարտավոր է նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակման ժամանակ, վերցնել նոր փոխառության յուրաքանչյուր պարտատոմս ստացողից ստորագրություն (ձև № 155) ցուցակի վրա:*

*Այն դեպքում, յերբ նախորդ փոխառությունների պարտատոմսատերը ներկայացնում է փոխանակման համար ավելի շատ կամ քիչ գումարով պարտատոմսեր, քան հայտնված է յեղել փոխանակման ցուցակները (ձև № 155) կազմելու ժամանակ, լիազորը պարտավոր է փոխանակումը կատարել անարգել կերպով:*

*Լիազորը պարտավոր է նույնպես անարգել կերպով փոխանակել այն անձնավորությունների պարտատոմսերը, վորոնք չեն մտել նախօրոք կազմած փոխանակման ցուցակի (ձև № 155) մեջ:*

*26) Յեթե փոխանակման ժամանակ պարտատոմսատիրոջ մոտ կհայտնաբերվեն մինչև 1936 թվի սեպտեմբերի 1-ը տեղի ունեցած վիճակահանություններում շահած կամ մարված նախորդ փոխառությունների պարտատոմսեր, ինչպես և վճարման յենթակա կտրոններ, ապա լիազորը պարտավոր է հայտնել յուրաքանչյուր պարտատոմսատիրոջ այն մասին, վոր նա կարող է ստանալ շահումը, պարտատոմսի արժեքը և վճարման յենթակա կուպոնի արժեքը—խնայողական դրամարկղում:*

*27) Շրջ(քաղ) խնայդրամարկղը պարտավոր է մատակարարել իր գյուղական լիազորներին յերկաթյա արկղներ կամ կաշվե պայուսակներ (կողպեքներով փակվող) պարտատոմսերը պահելու համար: Լիազորը պարտավոր է պարտատոմսերը տեղափոխել և պահել այդ արկղներում կամ պայուսակներում: Աշխատանքների մեջ ընդմիջում անելու դեպքում, լիազորը պարտավոր է հանձնել պարտատոմսերը կնքված ձևով գյուղխորհրդի գանձապահին, գյուղխորհրդի գանձարկղում պահելու համար:*

*28) Յուրաքանչյուր գյուղխորհրդում պարտատոմսերի փոխանակումը վերջացնելուց հետո, լիազորը պարտավոր է գյուղխորհրդի նախագահի և գյուղական օժանդակող հանձնաժողովի նախագահի հետ միասին, կազմել արձանագրություն — պարտատոմսերի փոխանակման արդյունքների մասին:*

*Արձանագրության մեջ պիտի նշվեն.*

*ա) Պարտատոմսերը փոխանակող անձնավորությունների քանակը յուրաքանչյուր փոխառության փոխանակված, պարտատոմսերի քանակը և ընդհանուր գումարն առանձին-առանձին:*

բ) Ձև № 155-ում մտցված, բայց իրենց պարտատոմսերը չփոխանակող անձնավորությունների քանակը, համաձայն ցուցակի այդ անձնավորությունների մոտ յեղած պարտատոմսերի քանակը և ընդհանուր գումարը։

Արձանագրությունը—փոխանակման ժամանակ նախորդ փոխառություններից ստացված պարտատոմսերի և նոր փոխառության մնացորդ պարտատոմսերի հետ միասին, լիազորը պարտավոր է գյուղխորհրդից վերադառնալուց հետո անմիջապես հանձնել շրջխնայդրամարկղ և հաշվետու լինել շրջխնայդրամարկղի առաջ նոր փոխառության առհաշիվ ստացված պարտատոմսերի ծախսման մեջ։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ

29) Անհրաժեշտության դեպքում, շրջ(քաղ) խնայդրամարկղը պարտավոր է տանել յերկհերթային կամ արտաժամյա աշխատանքներ նախորդ փոխառությունների պարտատոմսերի ստուգման և փոխանակման համար։

30) Շրջ(քաղ) խնայդրամարկղները և առաջին կարգի բաժանմունքները պարտավոր են փոխանակումը կատարել առանց պարտատոմսատերերից վորևէ հայտարարություն պահանջելու և առանց գրելու այն անձնավորությունների ազգանունը, վորոնք պարտատոմսեր են ներկայացնում փոխանակման համար։

Փոխանակման համար խնայդրամարկղ ներկայացված յուրաքանչյուր պարտատոմս, նախորոք պետք ստուգվի վիճակահանությունների աղյուսակներով հատկապես այդ նպատակի համար առանձնացված խնայդրամարկղի աշխատակիցների կողմից։

Փոխանակման ժամանակ պարտատոմսատիրոջը պետք է տրվի նոր փոխառության այնպիսի արժեքի պարտատոմսեր, վորպիսիք ցանկանում է պարտատոմսատերը։ Նոր փոխառության 10 և 25 ռուբլիանոց պարտատոմսերը տրվում են միայն այն ժամանակ, յերբ նախորդ փոխառություններից փոխանակման համար ներկայացված գումարի համաձայն չի կարելի տալ ավելի բարձր արժեքի պարտատոմս։

31) Շրջ(քաղ) խնայդրամարկղները պարտավոր են ապահովել, վորպեսզի այն բոլոր անձնավորությունները, վորոնք պարտատոմսեր են տվել ի պահ կամ գրավ են դրել, ինչպես և այն բաժանորդները, վորոնք չեն ստացել իրենց բաժնեգրու-



թյան վայրում իրենց կողմից վճարված գումարի դիմաց նախորդ փոխառությունների պարտատոմսերը. պարտատոմսեր, վորոնք գտնվում են տվյալ դեպքում, վորպես ի պահ խնայդրամարկղում, ներկայանան անձամբ խնայդրամարկղ փոխանակման համար կամ ուղարկեն գրավոր պահպանման վկայականի հետ միասին, նշելով դիմումի մեջ, թե նոր փոխառության ինչպիսի պարտատոմսեր են նրանք ցանկանում փոխանակել նախորդ փոխառությունների իրենց պարտատոմսերի հետ և նոր փոխառության պարտատոմսերը պետք ուղարկել իրենց, թե պահել այդպիսիք, վորպես ի պահ խնայողական դրամարկղներում։

Այդ նպատակի համար շրջ(քաղ) խնայդրամարկղը պետք ուղարկի փոստով յուրաքանչյուր կլիենտին համապատասխան ծանուցագիր, վորի հասցեն ցույց է տրված փոխատվա-պահպանման գործարքի անձնական հաշվի վրա։ Բացի դրանից, շրջ(քաղ) խնայդրամարկղը պարտավոր է լայն հաղորդել ազգաբնակչությանը մամուլի միջոցով, մասնավորապես թերթերում հայտարարություններ տալու կարգով այն պարտատոմսերի փոխանակման կարգի մասին, վորոնք գտնվում են, վորպես ի պահ կամ գրավ են դրված—խնայդրամարկղներում։

32) Խնայողական դրամարկղները պարտավոր են իրենց մոտ ի պահ գտնված պարտատոմսերն, ինչպես և բաժանորդների կողմից չպահանջված պարտատոմսերը փոխանակել մինչ 1937 թվի սեպտեմբերի 1-ը, հաջորդաբար պարտատոմսատերերը ներկայանալիս, կամ նրանց կողմից գրավոր դիմումներ ստանալիս։

Նախորդ փոխառությունների այն պարտատոմսերը, վորոնք գտնվում են խնայդրամարկղներում վորպես ի պահ և չեն պահանջվի մինչև 1937 թվի սեպտեմբերի 1-ը, այդ ժամկետից կորցնում են իրենց ուժը և փոխանակման յենթակա չեն։

33) Այն պարտատոմսերի փոխարեն, վորոնց արժեքը վճարված են բաժանորդների կողմից, սակայն դիմազրկված ձևով հանձնվել են այդպիսիք հիմնարկ-ձեռնարկության կողմից խնայդրամարկղ՝ ԽՍՀՄ ՑԺԿ-ի դեպոն, շրջ(քաղ) խնայդրամարկղները պարտավոր են մինչև 1937 թ. սեպտեմբերի 1-ը հանձնել բաժանորդներին նոր փոխառության պարտատոմսեր—ձեռնարկությունից, (հիմնարկությունից) և գյուղխորհրդից մուծումները վճարելու մասին համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում։

34) Նախորդ փոխառությունների գրավ դրված պարտա-

տոմսերի դիմաց տված փոխատվությունները, խնայողական դրամարկղները պետք հաշվարկումներ կատարեն և փոխանակեն գրավ դրված պարտատոմսերը մինչև 1937 թվի ապրիլի 1-ն, անձամբ փոխատվությունն ստացողը ներկայանալու, կամ նրանից փոխանակությունը կատարելու մասին գրավոր հայտարարություն ստանալուց հետո։

Փոխատվությունը պետք մարվի համաձայն փոխատվությունն ստացողի ցանկության կամ կանխիկ դրամով, կամ նոր փոխառության պարտատոմսերի համապատասխան գումարով, վորի հիման վրա փոխանակվել են գրավ դրված պարտատոմսերը։ Այն դեպքում, յերբ գրավ դրված պարտատոմսերով պարտատոմսատիրոջը յեկամուտ է հասնում (շահում, տոկոսներ) ապա խնայդրամարկղը պետք փոխատվության պարտքը, տոկոսները և պարտատոմսերը պահելու համար վճարի հետ միասին, մարի ի հաշիվ այդ յեկամտի։ Այդ յեկամտի բացակայության կամ անբավարար լինելու դեպքում, խնայդրամարկղն, այն դեպքում, յերբ պարտատոմսատերը ցանկանում է մարել փոխատվությունը գրավ դրված պարտատոմսերով, պետք փոխանակել, գրավ դրված պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերով, ըստ վորում փոխատվության պարտքը պարտատոմսերով մարելուց հետո, մնացած նոր փոխառության պարտատոմսերը պետք հանձնի փոխատվությունն ստացողին։

35) Փոխատվություն ստացողները չներկայանալու ինչպես և նրանցից մինչև 1937 թվի ապրիլի 1-ը հայտարարություններ չստանալու դեպքում, խնայդրամարկղները պարտավոր են ապրիլ ամսվա ընթացքում հեռակայորեն փոխանակել գրավ դրված պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերով։ Դրա հետ միասին ժամկետանց փոխատվության պարտքը տոկոսների և պարտատոմսերը պահելու համար վճարի հետ միասին խնայդրամարկղը պարտավոր է մարել ի հաշիվ գրավ դրված պարտատոմսերով չպահանջված յեկամտի, իսկ այդ յեկամտի բացակայության կամ անբավարար լինելու դեպքում մարում է նոր փոխառության պարտատոմսերի համապատասխան գումարով, վորոնց վրա փոխանակվել են գրավ դրված պարտատոմսերը։

1937 թվի ապրիլի 1-ին շրջ(քաղ) խնայդրամարկղը պարտավոր է հրամանով նշանակել հատուկ մի հանձնաժողով, գրավ դրված պարտատոմսերը շահումների վիճակահանություններով ստուգելու համար։ Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են—տե-



սուչը, ավ. վերահսկիչը (վերահսկիչը) և գանձապահը։ Հանձնաժողովը պարտավոր է կազմել արձանագրություն գրավ դրված պարտատոմսերը շահումների վիճակահանություններով ստուգելու մասին։ Հանձնաժողովի կողմից կազմած արձանագրությունը հաստատվում է շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչի կողմից։ Արձանագրության մի օրինակը պետք հանձնել շրջ(քաղ) խնայդրամարկղի հաշվապահությանը պահելու համար, իսկ մյուս օրինակը՝ շրջ(քաղ) խնայդրամարկղի գործառնական մասը—փոխառությունների լիկվիդացիան հեռակայորեն ձևակերպելու համար։

37) Այն դեպքում, յերբ պարտատոմսերի պարտքը մարելուց հետո մնացած գումարը կազմում է 5 ռուբլուց պակաս, այդ մնացորդը տրվում է փոխատվությունն ստացողին կանխիկ գումարով։

Յեթե փոխատվությունը մարված է հեռակայորեն, ապա այդպիսի մնացորդի վճարումը կատարվում է փոխատվությունն ստացողի ցանկությամբ։

## ՆԱԽՈՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄՆ ՈՒ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

38) Շրջ(քաղ) խնայդրամարկղը կամ առաջին կարգի բաժանմունքն ստացված նախորդ փոխառությունների փոխանակված բոլոր պարտատոմսերը (հիմնարկ-ձեռնարկությունների հաշվապահություններից, գյուղխորհուրդների կամ կոլտնտեսությունների փոխանակման կետերից, կամ դրամարկղային փոխանակման կարգով ստացված պարտատոմսերը) մարվում են որվա վերջը ծակելով ֆինանսների ժողկոմի ստորագրությունը։

Պարտատոմսերին կից 1937 թվի հոկտեմբերի 1-ի կուպոնների ինչպես հաջորդ ժամկետների կուպոնների վրայի ստորագրությունները չեն ծակվում, այնքան վորքան այդ կուպոններն իրենց ույժը կորցրել են։

Ծակված ստորագրություններով պարտատոմսերը յուրաքանչյուր որ հանձնվում են (ուղարկվում են առաջին կարգի բաժանմունքի կողմից շրջ(քաղ) խնայդրամարկղին, դասավորելով այդպիսիք ըստ առանձին փոխառությունների, բաժինների և կուպյուրների կապոցներով, ունենալով յուրաքանչյուր կապոցի մեջ 100 հատ պարտատոմս։

39) Շրջ(քաղ) խնայդրամարկները պարտավոր են նախորդ

փոխառությունների ծակված ստորագրություններով պարտատոմսերն ուղարկել հաջորդաբար, այդպիսիք կուտակվելուն պես, սակայն վոչ ուշ քան տասնորյակը մեկ անգամ հանրապետական յերկրային (մարզային) ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի Վարչության կից արժեքների ստուգման և վոչնչացման հանձնաժողովին:

Արժեքներն ուղարկվում են առանձին արձանագրության տեղեկագրի (ձև № 95) հետ միասին և ուղարկելիս ապահովագրվում են նվազագույն արժեքով, վորպիսին թույլատրվում է փոստային կանոնագրությամբ, այսինքն 25 ռուբլի գումարի չափով:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ՇՐՋ(ՔԱՂ) ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

40) Շրջ(քաղ) խնայդրամարկղներում և առաջին կարգի բաժանմունքներում պարտատոմսերի փոխանակումն անմիջականորեն կատարում են գանձապահները.

Գանձապահը փոխանակման ժամանակ պարտավոր է՝

ա) Ստուգել պարտատոմսի վճարունակությունը և ընդունել այդպիսին փոխանակման համար:

բ) Տալ նոր փոխառության համապատասխան կուպյուրների պարտատոմսեր համաձայն պարտատոմսերը փոխանակող անձնավորության ցանկության՝

գ) Գրել նախորդ փոխառությունների փոխանակման համար ընդունված պարտատոմսերի գումարը և նոր փոխառության տված պարտատոմսերի գումարը ձև № 157 տեղեկագրի մեջ (տես № 2 հավելվածը).

41) Որվա վերջը գանձապահը պարտավոր է դուրս բերել տեղեկագրի մեջ ընդհանուր գումարները և հաշվել փոխանակված պարտատոմսերի առկա գումարն ըստ առանձին փոխառությունների, ստուգել այդ պարտատոմսերի ընդհանուր գումարը տեղեկագրի գումարների հետ, գրել տեղեկագրի վրա ընդհանուր գումարի տակը յուրաքանչյուր փոխառության պարտատոմսերի գումարը, ստորագրել տեղեկագիրը և հանձնել այդպիսին վերահսկիչին որդերը կազմելու համար:

Խնայդրամարկղի վերահսկիչը պարտավոր է այդ տեղեկագրի հիման վրա կազմել յերկու որդեր մեկը՝ խմբավորված ձև



№ 158 (տես № 3 հավելվածը) փոխանակման նպատակով ընդունված պարտատոմսերի մուտքի համար և յերկրորդ՝ յելքի ձև № 53 փոխանակման նպատակով դուրս գրված յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերի ծախսման համար: Որդերի վրա վերահսկիչը պարտավոր է նշել նոր փոխառության տված պարտատոմսերի գումարն ըստ առանձին բաժինների (անպայման շահող և տոկոսաբեր):

Որդերները պետք ստորագրեն վերահսկիչն ու գանձապահը.

42) Խնայդրամարկղները պետք տան նոր փոխառության առհաշիվ պարտատոմսեր հիմնարկ-ձեռնարկներին՝ նրանց ներկայացուցիչների միջոցով հիմնարկ-ձեռնարկության կողմից ձև № 140 բլանկով տված լիազորագրի հիման վրա:

Խնայդրամարկղը պարտավոր է ուղարկել հիմնարկ-ձեռնարկությանը ծանուցագիր ձև № 140ա. ձևով—յուրաքանչյուր լիազորագրերով տված պարտատոմսերի գումարի մասին:

Պարտատոմսերն ստանալու համար լիազորագրերը պետք ներկայացնել շրջ(քաղ) խնայդրամարկղի (կամ առաջին կարգի բաժանմունքի) վարիչին, վորը պարտավոր է ստուգել լիազորագրի ճշտությունը, համոզվել անձնագրով (կամ նրան փոխարինող փաստաթղթով), թե իրոք լիազորագրի ներկայացնողը հանդիսանում է այն անձնավորությունը, վորը ցույց է տրված լիազորագրի մեջ, բացի դրանից, գրել լիազորագրի վրա անձնագրի տված տեղն ու համարը գրավոր կարգադրել իր ստորագրությամբ լիազորագրի վրա պարտատոմսերը տալու մասին և լիազորագիրը հանձնել վերահսկիչին կատարելու համար:

Վերահսկիչը՝ լիազորագրով պարտատոմսերը տալիս պարտավոր է՝

ա) Գրել ձև № 53 որդերը լիազորագրով պահանջված պարտատոմսերը տալու համար: Որդերի վրա, վերահսկիչը պետք գրի հիմնարկ-ձեռնարկության անվանումը, նրա ձև № 115 անձնական հաշվի համարը, տված պարտատոմսերի գումարն ըստ առանձին մասերի (անպայման շահող և տոկոսաբեր):

բ) Գրել՝ տված պարտատոմսերի գումարը տվյալ հիմնարկ-ձեռնարկության ձև № 115 անձնական հաշվի քարտի մեջ, վորը բացված է յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկումները կատարելու համար:

գ) Վերցնել՝ որդերի յետևի մասի վրա պարտատոմսերն

ստացողի ստորագրությունը և համեմատել վերջինս լիազորագրի վրա յեղած նրա ստորագրության հետ, մակագրել իր ստորագրությամբ լիազորագրի վրա, «տված է ............ ռուբլու պարտատոմսեր « ____ » ............ ամսի 193 թիվ», կցել լիազորագիրն օրդերին և հանձնել գանձապահին։

Գանձապահը պարտավոր է ստուգել օրդերի գումարը լիազորագրի մեջ նշված պարտատոմսերի գումարի հետ, և համոզվել անձնագրով (կամ նրան փոխարինող փաստաթղթով) պարտատոմսերն ստացողի անձնավորության մեջ և տալ պարտատոմսերը։

43) Յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության առհաշիվ ստացված նոր փոխառության պարտատոմսերի վերաբերյալ հաշվարկումները կատարում է շրջ(քաղ) խնայդրամարկղի հետ, հանձնելով վերջինիս կամ առաջին կարգի բաժանմունքին (յեթե պարտատոմսերը ստացված են յեղել բաժանմունքից) նախորդ փոխառությունների փոխանակված պարտատոմսերը և նոր փոխառության չօգտագործված պարտատոմսերը։

Հիմնարկ-ձեռնարկությունը փոխանակված պարտատոմսերը պիտի հանձնի խնայդրամարկղ առաջնորդող գրությամբ այն ձևով, որը սահմանված է «ԽՍՀՄ ՖԺԿ-ի յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) իրացման կարգի և պայմանների մասին բանվոր-ծառայողների և քաղաքի այլ ազգաբնակչության մեջ և մինչև 1936 թիվը բաց թողնված պետական մասսայական փոխառությունների պարտատոմսերն այդ փոխառության պարտատոմսերով փոխանակելու (կոնվերսիա) կարգի մասին»—հրահանգով, (հրահանգի 53 հոդվածը)։

44) Պարտատոմսերը հանձնելու վերաբերյալ առաջնորդող գրությունը պիտի հանձնել խնայդրամարկղի վերահսկիչին, վորը պարտավոր է ստուգել կազմած գրության ճշտությունը և հանձնել այդպիսին գանձապահին պարտատոմսերն ընդունելու և ստուգելու համար։

Գանձապահը պարտավոր է ստուգել պարտատոմսերի վճարունակությունը, ընդունել այդպիսիք և իր ստորագրությամբ հաստատել առաջնորդող գրության վրա ստացված պարտատոմսերի գումարն ըստ առանձին փոխառությունների և գրությունը հանձնել վերահսկիչին։

Գանձապահի կողմից հաստատված առաջնորդող գրության հիման վրա, վերահսկիչը պարտավոր է գրել խմբավորման օր-



դեր ձև № 159 (տես № 4 հավելվածը) և ձև № 160 անդորրագիրը (տես № 5 հավելվածը), գրել ընդունված պարտատոմսերի գումարը տվյալ հիմնարկ-ձեռնարկության ձև № 115 անձնական քարտի «հանձնված են փոխանակված պարտատոմսեր» սյունակում, հանձնել օրդերը առաջնորդող գրության և անդորրագրի հետ գանձապահին ստորագրելու և անդորրագիրը հանձնելու պարտատոմսերը հանձնող հիմնարկ-ձեռնարկության ներկայացուցչին։

45) Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը պիտի տալ փոխանակման գյուղական լիազորներին շրջ(քաղ) խնայդրամարկղների կողմից, վորպես առհաշիվ միայն շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչի գրավոր կարգադրությամբ, վորը պարտավոր է իր կարգադրության մեջ նշել լիազորին հանձնվող պարտատոմսերի գումարն ըստ կուպյուրների. վարիչի կողմից տալու համար թույլատրած պարտատոմսերի գումարի համար վերահսկիչը պարտավոր է գրել ձև № 53 օրդերը։ Օրդերի վրա ցույց է տրվում լիազորի ազգանունը, անունը և հայրանունը, փոխառության անվանումը ու պարտատոմսերի գումարն ըստ փոխառության առանձին մասերի (անպայման շահող և տոկոսաբեր)։

Վարիչի կարգադրությունը և վերահսկիչի օրդերը պիտի հանձնել գանձապահին։ Գանձապահը պարտավոր է ստուգել օրդերի գումարը, վարիչի կողմից իր կարգադրության մեջ ցույց տված պարտատոմսերի գումարի հետ, օրդերի հետևի մասի վրա վերցնել լիազորի ստորագրությունը պարտատոմսերն ստանալու մասին և հանձնել նրան պարտատոմսերը։

46) Փոխանակված պարտատոմսերը լիազորը պարտավոր է հանձնել շրջ(քաղ) խնայդրամարկղ, փոխանակման արդյունքների մասին կազմած արձանագրության հետ միասին (այս հրահանգի 28 րդ հոդվածը)։

Լիազորը պարտավոր է ներկայացնել արձանագրությունը շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչին, վորը պիտի ստուգի արձանագրության ճշտությունն ու լրիվ լինելը, իր ստորագրությամբ կարգադրի արձանագրության վրա փոխանակված պարտատոմսերը և նոր փոխառության չօգտագործված պարտատոմսերն ընդունելու մասին և վերահսկիչի միջոցով արձանագրությունը հանձնի գանձապահին։

47) Գանձապահը պարտավոր է ստուգել լիազորի կողմից հանձնված պարտատոմսերի վճարունակությունը, ընդունել այդ-

պլանի, հաստատել արձանագրության վրա իր ստորագրությամբ փոխանակման համար ընդունված պարտատոմսերի գումարն ըստ առանձին փոխառությունների, ընդունել լիազորից նոր փոխառության չօգտագործված պարտատոմսերի մնացորդը և նույնպես հաստատել արձանագրության վրա իր ստորագրությամբ ընդունված գումարն ըստ փոխառության առանձին բաժինների (անպայման շահող կամ տոկոսաբեր) և վերադարձնել արձանագրությունը վերահսկիչին:

Գանձապահի կողմից հաստատված արձանագրության հիման վրա, վերահսկիչը պարտավոր է՝

ա) Գրել ձև № 161 խմբավորման օրդերը (տես № 6 հավելվածը) փոխանակված պարտատոմսերն ընդունելու համար.

բ) Գրել ձև № 54 օրդերը, լիազորի կողմից հանձնվող նոր փոխառության չօգտագործված պարտատոմսերի մնացորդն ընդունելու համար, գրելով օրդերի վրա լիազորի ազգանունը, անունը և հայրանունը, փոխառության անվանումը և պարտատոմսերի գումարն ըստ փոխառության առանձին մասերի (անպայման շահող կամ տոկոսաբեր):

գ) Գրել ձև № 160 անդորրագիրը (տես № 5 հավելվածը) փոխանակվող և նոր փոխառության մնացորդ պարտատոմսերն ընդունելու համար:

դ) Հանձնել գանձապահին արձանագրությունը, օրդերները և անդորրագիրը. գանձապահը պարտավոր է ստուգել օրդերների վրա նշված գումարն արձանագրության և անդորրագրի մեջ նշված գումարների հետ, ստորագրել օրդերները և անդորրագիրը և հանձնել անդորրագիրը լիազորին:

48) Ի պահ վերցրած պարտատոմսերի տերերը, պարտատոմսերը փոխանակելու նպատակով փոխատվա-պահպանման վկայականը ներկայացնելու դեպքում, վերահսկիչը պարտավոր է՝ ա) ստուգել վիճակահանությունների աղյուսակներով պարտատոմսերի համարները և սերիաները, բ) ստուգել փոխատվա-պահպանման վկայականը անձնական հաշվի հետ, գ) հաշվել պարտատոմսերը պահելու վճարը, դ) գրել ձև № 53 օրդերը պարտատոմսերի ամբողջ գումարը պահպանումից տիրոջը հանձնելու համար և վերցնել օրդերի յետևի մասի վրա, ինչպես և անձնական հաշվի վրա տիրոջ ստորագրությունը պարտատոմսերն ստանալու մասին, դ) գրել ձև № 53 օրդերը պարտատոմսատիրոջը հասանելիք պարտատոմսերը պահելու վճարի համար, յե) գրանցել



պարտատոմսերի հանձնումը փոխատվա-պահպանման վկայականի և անձնական հաշվի մեջ, մակագրել իր ստորագրությամբ փոխատվա-պահպանման վկայականի և անձնական հաշվի վրա «հաշիվը փակված է այսինչ թվի այսինչ ամսի այսինչ օրը», զ) հանձնել ձև № 53 օրդերը մարված փոխատվա-պահպանման վկայականի հետ՝ գանձապահին:

Գանձապահը պարտավոր է՝ ստուգել առկա պարտատոմսերի գումարը օրդերի և փոխատվա-պահպանման վկայականի գումարների հետ, ընդունել պահպանման համար վճարը, հանձնել շահած պարտատոմսը շահման վճարումը ձևակերպելու համար վերահսկիչի միջոցով, փոխանակել չշահված պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերի հետ, գրել փոխանակումից ստացված պարտատոմսերի գումարը և նոր փոխառության հանձնված պարտատոմսերի գումարը ձև № 157 տեղեկագրի մեջ (տես այս հրահանգի 40-րդ հոդվածը):

49) Եթե փոխանակվող պարտատոմսերի տերը, որոնք գտնվում են պահպանման մեջ, թողնում է նոր փոխառության պարտատոմսերը որպես կրկին անգամ ի պահ, վերահսկիչը պարտավոր է գրել նոր փոխատվա-պահպանման վկայական և նոր անձնական հաշիվ—ձևակերպելով այդ գործարքը որպես նոր ի պահ ընդունում:

Նոր անձնական հաշիվների և փոխատվա-պահպանման վկայականների համարակալումը վերահսկիչը պիտի սկսի առաջին համարից և նոր անձնական հաշիվների քարտերը պիտի տեղավորի նախկին անձնական հաշիվների քարտատեկայից առանձին:

50) Փոխատվա-պահպանման վկայականը և ի պահ վերցրած պարտատոմսերի փոխանակման մասին պարտատոմսատերերի կողմից փոստով ուղարկված գրավոր հայտարարությունները ստացվում են շրջ(քաղ) խնայդրամարկղի վարիչի կամ այն առաջին կարգի բաժանմունքի վարիչի կողմից, ուր գտնվում են անձնական հաշիվները և պարտատոմսերը: Վարիչը պարտավոր է ստուգել փոխատվա-պահպանման վկայականի իսկական լինելը, ուղարկված հայտարարության ճշտությունը և ստուգել այդ փաստաթղթերը պարտատոմսատիրոջ անձնական հաշվի հետ: Եթե փաստաթղթերը ճիշտ են, վարիչը պիտի հայտարարության վրա անի գրավոր կարգադրություն վերահսկիչի վրա—պարտատոմսերի փոխանակման մասին:

Վերահսկիչն այդ դեպքում պիտի ձևակերպի պարտատոմ-

սերի փոխանակումը այս հրահանգի 48 և 49 հոդվածներով նախատեսված կարգով: Պարտատոմսերը պահպանումից դուրս գրելու համար վերահսկիչն օրդերին կցում է ուղարկված հայտարարությունը, իսկ պարտատոմսատիրոջ ստորագրության փոխարեն, պետք գրի օրդերի վրա նոր փոխատվա-պահպանման վկայականի համարը: Նոր փոխատվա-պահպանման վկայականը—խնայդրամարկղը պետք ուղարկի պարտատոմսատիրոջը պատվիրված նամակով:

